

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուն հայերենին տիրապետելու հանգամանքի հավաստման նպատակով բացի վկայական, ատեստատ, դիպլոմ ներկայացնելուց, պետք է հանձնի հայոց լեզվի գրավոր թեստային քննություն, արդյունքում ստանա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ ԿԸՀ) կողմից տրամադրված հայերենի գրավոր՝ թեստային քննությունն անցնելու մասին վկայագիրը և ներկայացնի ԿԸՀ-ին: Նախագծի հիմնավորման համաձայն՝ նախագիծը բխում է «Լեզվի մասին» ՀՀ օրենքից՝ ապահովելով պետական ինստիտուտի նկատմամբ հանրային հարգանքը: Ըստ նախագծի ընդունման հիմնավորման՝ դրա ընդունմամբ կբացառվի գործող օրենքի դրույթների ձևական իմաստը և նոր իրավաքաղաքական հարաբերություններում ձևականից անցում կկատարվի բովանդակայինի:

Նախագծին հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ իրավակարգավորումների լույսի ներքո:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք: Ուշագրավ է, որ ՀՀ Սահմանադրությամբ հայերենին տիրապետելու դրույթը լեզվին տիրապետելու որակական բնութագրիչներով սահմանված չէ:

Սահմանադրությունը պատգամավորների համար նախատեսում է հայերենին տիրապետելու պահանջ, որն ընդհանուր կանոնի համաձայն հավաստվում է ուսումնական հաստատություններում հայերենով կրթություն ստացած կամ կրթական ծրագրերով նախատեսված՝ «հայոց լեզու» առարկայի ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած իննելու վերաբերյալ ուսումնական հաստատությունների կողմից տրված ավարտական փաստաթղթով (վկայական, ատեստատ, դիպլոմ): Ավելին՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է նաև նշված ավարտական փաստաթղթերի բացակայության դեպքում պատգամավորի՝ հայերենին տիրապետելու

հանգամանքը հավաստելու համապատասխան ընթացակարգ, այն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության սահմանած կարգով պատգամավորի թեկնածուի՝ հայերենին տիրապետելու հանգամանքի ստուգումը: Նշված նորմին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի հունվարի 13-ի N 06-Ն հրամանով հաստատվել է Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու առաջադրվող քաղաքացու՝ հայերենին տիրապետելու հանգամանքը հավաստող ավարտական փաստաթղթի բացակայության դեպքում հայերենին տիրապետելու հանգամանքի ստուգման կարգը, որով նշված քննության անցկացման, ինչպես նաև դրա վերահսկողության լիազորությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին: Մինչդեռ նախագծով, ըստ էության, նախատեսվում է հայերենին տիրապետելու փաստը հավաստող համապատասխան ավարտական փաստաթղթի առկայության դեպքում անգամ հայերենի գրավոր թեստային քննություն հանձնելու և դա հավաստող՝ ԿԸՀ-ի կողմից տրամադրվող վկայագիր ներկայացնելու պահանջ, ինչի արդյունքում փաստացի իմաստագրվում է ուսումնական հաստատությունների կողմից տրված ավարտական փաստաթղթերի՝ հայերենին տիրապետելու հանգամանքի մասին վկայող ապացուցողական նշանակությունը: Ավելին՝ նախագծով հայոց լեզվի գրավոր թեստային քննության անցկացման և դրա հիման վրա վկայագրի տրամադրման լիազորությունը վերապահվում է ԿԸՀ-ին:

Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԿԸՀ-ն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ: Ակնհայտ է, որ ԿԸՀ-ի իրավասությունը սահմանափակվում է բացառապես ընտրությունների կազմակերպման և դրանց օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացմամբ, ուստի նախագծով նախատեսվող՝ պատգամավորի հայերենի գրավոր թեստային քննություն անցկացնելու և դրա հիման վրա համապատասխան վկայագրի տրամադրումը չի բխում ԿԸՀ-ի լիազորություններից: Միաժամանակ հարկ է նշել, որ նախագծով նախատեսված չէ ԿԸՀ-ի կողմից հայերենի գրավոր թեստային քննություն անցկացնելու ընթացակարգի վերաբերյալ որևէ կարգավորում:

Տեղին է նշել նաև, որ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված է հայերենին տիրապետելու պահանջ նաև այլ պաշտոնատար անձանց համար և այդ պաշտոնները զբաղեցնող անձանց նկատմամբ նույնպես պետք է գործի հայոց լեզվին տիրապետելու հանգամանքի կանխավարկածը: Կարծում ենք, որ բոլոր պաշտոնատար անձանց

համար պետք է գործեն միատեսակ որակական բնութագրիչներ, որոնք պետք է հաստատի
և գնահատի լիազոր մարմինը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն
առաջարկում է նախագծով քննարկվող օրենսգրքի գործող հոդվածները թողնել անփոփոխ: